ԱՐՑԱԽ. Ադրբեջանի մարտահրավերը եւ դիմագրավելու հրամայականը

ՍՈՒՐԵՆ ՎԱՀԱՆՅԱՆ

Պաշտոնական հաղորդագրությունների համաձայն, մոտ ժամանակներս ակնկալվում է եվրաազմակերտության Մինսկի խմբի եռանախագահության հերթական այցելությունը մեր տարածաշրջան: Եվ դա պետք է բնականոն համարել: Չէ՞ որ տեղի է ունեցել ծրագրված փոփոխություն՝ Ավստրիայի արտաքին գործոց նախարարին հաջորդել է Ռումինիայի նրա պաշտոնակիցը: Վերջինս արդեն հայտարարել է, թե ավելի մեծ տեղ է հատկացնելու Կովկասի իրադարձություններին:

Ոչ պակաս կարեւոր հանգամանք է այն, որ նոյեմբերի 30-ին Մինսկում վերսկսվեցին Քոչարյան-Ալիեւ նախագահական հանդիպումները: Ճիշտ է, հասարակությունը հերթական անգամ անմասն մնաց մանրամասներն իմանալուց, բաց երկկողմ հարաբերություններ պահպանելու իմաստով դրանք օգտակար քայլեր են: Ահա, համանախագահները գալիս են անհրաժեշտ տեղեկություն ստանալու հակադիր կողմերից, շոշափելու նրանց տրամադրությունները եւ, միգուցե, առաջարկներ ներկայացնելու կնճիռի հարթեցման համար: Իսկ ի՞նչ դիրքորոշում ունեն Բաքվում եւ Երեւանում:

Մամուլում արդեն հրապարակվել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Վիլայաթ Գուլիեւի հարցազրույցը, որտեղ նա առանց սեթեւեթանքի, պարզ ու շիտակ արծանագրել է իր երկրի դիրքորոշումները երկու հարցերի վերաբերյալ: Առաջինը վերաբերում է «Ընդհանուր պետության» գաղափարին, որը Մինսկի խմբի համանախագահների վերջին պաշտոնական առաջարկն էր: Պարոն Գուլիեւն ընդգծում է, որ «Ադրբեջանը կտրականապես հրաժարվում է ընդունել այդ հայեցակարգը, քանի որ այն նախատեսում է Հարավային Կովկասում երկրորդ հայկական պետության ստեղծում»: Լավ, իսկ ի՞նչ է փոխարենը առաջարկում Բաքուն: Ահա պատկերը. «Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղին ինքնակառավարման ամենաբարձր աստիճանի տրամադրման հիման վրա հայերի ու ադրբեջանցիների համատեղ բնակեցմամբ»: Դեռ ոչ ոք ադրբեջանական կողմից ոչ մի անգամ, ոչ մի տեղ չի ասել, թե ինչ կնշանակի «ամենաբարձր աստիճանի ինքնակառավարում»: Սա պարզորոշ բառախաղ է եւ քաղաքական բովանդակությունից զուրկ:

Ադրբեջանի արտաքին գերատեսչությունն ղեկավարը պատասխանել է նաեւ տարածքների փոխանակման առաջարկին որպես հակամարտության կարգավորման բազմաթիվ տարբերակներից մեկը: Եվ ի՞նչ. այն, որ «Ադրբեջանը երբեք լուրջ նշանակություն չի տվել այդ տարբերակին: Մենք չենք պատրաստվում գնալ տարածքների փոխանակման եւ Ադրբեջանում այս հարցի քննարկումներում վերջակետ է դրվել»: Հուսանք, որ մեզ մոտ եւս նման պնդումներից հետո այլեւս չի շահարկվի Մեղրու հնարավոր փոխանակման խնդիրը: Չէ կարելի օտարների ինչ-ինչ հնարավոր առաջարկների համար մեղավոր դարձնել սեփական երկրի ղեկավարին եւ քարոզարշավ սկսել նրա դեմ: Հիրավի, ատելությունը վատ խորհրդատու է:

2

ԱՐՑԱԽ. Ադրբեջանի մարտահրավերը եւ դիմագրավելու հրամայականը

Իսկ ի՞նչ է պատասխանում Հայաստանը Բաքվի նման դիրքորոշումներին: Նախ արձանագրվում է մոտեցումների կոշտությունը, որը բացառում է փոխզիջումային լուծումների իրագործումը: Երկրորդ կառուցողական առումով հնարավոր է դիտվում հակամարտության կարգավորում սահմանների անխախտելիության եւ ինքնորոշման իրավունքի համատեղությամբ: Տեսական ընդհանուր պատկերացման առումով գուցեեւ դա հնարավոր է, բայց Ադրբեջանի բացառապես կոշտ պահվածքի դեպքում իմաստ չունի խորհել ինչ-ինչ քաղաքական մտապատկերների մասին: Պետք է իրատես լինել եւ մնալ այդպիսին: Իսկ սա խիստ պարտավորեցնող է: Նախեւառաջ, մենք պետք է խորապես գիտակցենք դիմագրավելու հրամայականը, որը նշանակում է զերծ մնալ այն մտայնությունից, որ եթե հրադադար է, ապա պատերազմն ավարտված է: Այդպիսի տպավորություն է ստեղծվել այն բանից հետո, երբ 1994թ. կնքված համաձայնագրից այս կողմ լուրջ միջադեպեր չեն եղել: Եվ եթե մենք որպես պատերազմում հաղթող կողմ, կարող ենք մի պահ թուլացնել զգոնությունը, ապա Բաքվում, փաստորեն, ոչ մի օր չեն մոռանում, որ իրենք պարտված են, եւ ջանում են կորցրածը ետ բերել. անցած վեց տարիներին դա եղել է բացառապես քաղաքական միջոցներով, որը, ինչպես տեսանք, արդյունք չի տվել: Իսկ ո՞վ կարող է երաշխիք տալ, որ հակառակորդ կողմին կբավարարի համբերությունը շարունակելու բանակցային գործընթացը եւ ոչ թե մտաբերելու մեկ այլ միջոց զենքը: Համենայն դեպս, Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի զարգացրած մտքերը չափազանց հեռու են խաղաղության հասնելու մտադրությունից: Այդ մտքերը ոչ այլ ինչ են, եթե ոչ հակառակորդի ռազմամոլության աճի վատ քողարկումներ:

Մինչդեռ մենք քողարկելու ոչինչ չունենք, մեր ժողովրդի մի հատվածը ազգային-ազատագրական պայքարի ընթացքում ձեռք է բերել ազատություն եւ անկախություն: Եվ եթե հերթական անգամ արտաքին վտանգ է սպառնում նրա ինքնիշխան գոյությանը, ապա նա կոչված է համարժեք պատասխան տալու ագրեսորին: Դա նրա սրբազան իրավունքն է: Միայն թե այն ներքին լարվածությունները, որ առկա են Արցախում, լուրջ խոչընդոտներ չդառնան դիմակայության կռվում: Իհարկե, կան սոցիալ-տնտեսական դժվարություններ, որոնք առարկայական բնույթի են եւ որպեսզի անհրաժեշտ պահին նրանք չզլանան իրենց հայրենասիրական պարտքը կատարել:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա նա առնվազն պետք է ակտիվացնի իր ներքին եւ արտաքին քարոզչական աշխատանքը. հնարավորություն չտա, որպեսզի Ադրբեջանը ազատորեն շարադրի իր պատկերացումները հակամարտության վերաբերյալ: Ոչ մի կերպ արդարացուցիչ չէ մեր պատվիրակության կրավորական կեցվածքը, երբ հարեւան երկրի Միլի մեջլիսի փոխնախագահը մեզ մոտ Երեւանում, մեզ քարոզ է կարդում իրենց հողերի գրավման, մեկ միլիոն փախստականների եւ այլնի մասին: Կարծել, թե նման մտքերին պատասխան տալը մարդկանց մոտ ալերգիա կառաջացնի մանկամտություն է: Միշտ պետք է պատրաստ լինել բախմանը եւ հակահարված տալուն:

Վերջապես, մեր մեծահարուստները, որ գլուխ են կոտրում Ազգային ժողովում մնալու համար, չէ՞ին կարող նշանակալի գումարներ նվիրաբերել «Հյուսիս-Հարավ» ճանապարհի կառուցմանը: Էլ ինչո՞ւ են ցանկանում պետության այրեր դառնալ, եթե չեն մտահոգվելու ազգի ու պետության առաջնահերթ խնդիրներով:

Այսօր բանակը, իշխանությունը եւ ժողովուրդը կանգնած են դժվարությունները դիմագրավելու հրամայականի առջեւ: Եվ եթե նրանցից որեւէ մեկը թերանա իր պարտականությունները կատարելիս, մենք, հնարավոր է, էլ ավելի նեղացնենք մեր գոյության շրջանակը այս բարդ տարածաշրջանում: Մինչդեռ հակառակն է ճիշտը, առավել եւս, որ այդ ճշտի նկատմամբ մենք ունենք պատմական իրավունքներ: